ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00374 10) 511-771

№ԴԴ-1-Ա-7556

«30» հոկտեմբերի 2020թ.

«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Վարդանանց փ./շ/10/37 բն.)

Հարգելի պարոն Սարգսյան,

Սույն թվականի հուլիսի 30-ին Դատական դեպարտամենտի և «ԲԼԱՄՄՈ» ՍՊ ընկերության միջև կնքվել է ապրանքի մատակարարման թիվ ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/29-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), ըստ որի Վաճառողը պարտավորվել է Գնորդին մատակարարել 40 հատ առաստաղի LED լուսատուներ: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 31.07.2020թ-ին: Նշված Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն, ապրանքի մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի օգոստոսի 29-ը (Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օր):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1-րդ կետով սահմանված պարտավորությունը՝ այն է. «Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով» և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5-րդ կետը՝ 2020 թվականի հոկտեմբերի 12-ին Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի՝ Վաճառողին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-7095 գրությամբ սահմանվել է ապրանքի մատակարարման նոր ժամկետ (10 օրացուցային օր): Վերը նշված գրությունը նույն օրը՝ 12.10.2020թ-ին, ուղարկվել է Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին: Բացի այդ, հիշյալ գրությունը փոստային առաքման ծառայության միջոցով ուղարկվել է նաև Վաճառողի հասցեով: Սակայն, մինչ օրս, Վաճառողի կողմից չի կատարվել որևէ գործողություն, որն ուղղված կլիներ Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարմանը, ինչպես նաև Պատվիրատուին չի ներկայացվել որևէ փաստարկ՝ վերը նշված ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում չմատակարարելը հարգելի համարելու վերաբերյալ:

Այսպիսով, Վաճառողի կողմից խախտվել են Պայմանագրի ինչպես 2.4.1-րդ կետով, այնպես էլ 2.4.2-րդ կետով սահմանված պարտավորությունները:

Համաձայն Պայմանագրի 2.1.1-րդ կետի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից

ավելի: Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանված է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, իսկ 2.1.7.1-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Տվյալ դեպքում Վաճառողի կողմից մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ և 2.4.5-րդ կետերով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով պայմանագրի 2.1.4-րդ կետի բ) ենթակետի, 2.1.7-րդ կետի և 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝

1. միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը,
2. ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ,
3. հիշեցնում է, որ պատասխանատվություն եք կրում Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՓՈԼԱԴՅԱՆ